**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «17» 05. 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության պետի ՊԺԿ, 1-ին դասի խորհրդական Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոմունալ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ա. Նիկոլյան,
Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Ստարտկոպի» ՍՊԸ և «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ: «Ստարտկոպի» ՍՊԸ 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը թերի են՝ 3-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով նախատեսված ներկափոշու պարունակությունը, ինչպես նաև էջերի տպելու թողունակությունը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի էջերի տպելու թողունակությանը, իսկ 8-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով նախատեսված «Part» համապատասխան համարը: «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ կողմից 23-րդ և 27-րդ չափաբաժինների մասով ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է համապատասխանաբար «006R01701 կամ 006R01697 կամ համարժեք» և «013R00662 կամ համարժեք»: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը բացառելով «կամ համարժեք» բառերը: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը՝ և 18.05.2018թ. ծանուցել է վերոնշյալ մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

«Ստարտկոպի» ՍՊԸ 2-րդ և 11-րդ չափաբաժինների և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ 19-րդ և 20-րդ չափաբաժինների ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերի մասով անհրաժեշտություն է առաջացել մասնագիտական եզրակացության, որը և տրամադրվել է պատասխանատու ստորաբաժանման կողմից 18.05.2018թ. ելք ՊՆ/566-120 գրությամբ: Համաձայն մասնագիտական եզրակացության մասնակիցների վերոնշյալ չափաբաժիններով ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը համարժեք են հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:***

1.2 22.05.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Լ. Խաչատրյան

**Գնահատող** Գ. Ոսկանյան

**Գնահատող** Ս. Նիկոյան

**Գնումները համակարգող՝** Գ. Տերյան